ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2025թ. թիվ 750-Ա

Ա.ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի օգոստոսի 1-ի թիվ 423-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Թորոսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Արծնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Թորոսյանին տրամադրել 2024-2025թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը ս/թ նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 12-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր:

2. Ա.Թորոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «ՀՀ Լոռու մարզի Արծնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Արծնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության ուսուցիչ Սուսաննա Խանաղյանին:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-11-20 12:58:35 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. նոյեմբերի 20
ք.Վանաձոր